իմ քեռի Պետրոսի, տէր Թոդիկի եւ նրանց համախոհների մասին: Դու եւ այն մոռացած չես լինի, որ յետոյ ես եւ Մարօն գիշերով գնացինք ծպտեալ ճգնաւորի՝ Ասլանի մօտ, գտանք նրան ծովեզերքում մի այրի մէջ եւ մինչեւ առաւօտ մնացինք այնտեղ: Այդ բոլորը լցնում են պառաւ Խաթունի միամիտ գլուխը զանազան կասկածներով, որը, առանց դրանց եւս, իմ եւ Մարօի յարաբերութիւնների վրայ միշտ ծուռն աչքով էր նայում: Խաթունը մոլեռանդ է, դա այն հաւատաւոր կանանցից մէկն է, որ կարծում են թէ ամէն բան պէտք է ասել տէրտէրին: Իսկ այդ դէպքում, նա աւելի պատճառներ ունէր յայտնելու տէր Թոդիկին բոլորը, ինչ որ լսել էր նա մեր այն գիշերոայ խօսակցութիւնից: Ասում եմ, պատճառներ ունէր, որովհետեւ Մարօի անխոհեմ սպառնալիքները վերաբերում էին ըստ մեծի մասին տէր Թոդիկին, եւ հաւատաւոր պառաւը պարտք էր համարել զգուշացնել քահանային: Տէր Թոդիկը, ինչպէս յայտնի է, այն տեսակ անձինքներից է, որ «սեւ ջրից սեր կքաղեն», այսինքն, ամենաչնչին բանից օգուտ քաղել գիտէ: Իսկ պառաւը յայտնել էր նրան շատ բան: Նա թափ էր տոել պառաւի միամիտ գվխից բոլորը, ինչ որ յայտնի էր որսորդի տան եւ նրա այցելուների մասին: Այնուհետեւ տէր Թոդիկը, ոչ այնքան անձնապաշտպանութեան զգացմունքից դրդոած, որքան վրէժխնդրութեան ախտով կատաղած, վճռում է պատժել Ասլանին, մանաւանդ, որ Ասլանի եւ նրա ընկերների գործունէութիւնը ամենեւին համակրելի չէր թէ՛ տէր հօրը եւ թէ՛ նրա համախոհներին: Նա անմիջապէս յայտնում է իմ քեռի Պետրոսին եւ Կարապետ հայր սուրբին իր ստացած տեղեկութիւնները, յետոյ իմացում են տալիս Շարիֆ-բէկին, որ այդ ժամանակ գտնւում էր Ս. Տիրամօր վանքում, եւ չորսը միասին գրում են նահանգապետ փաշային այն նամակը, որ քանի որպէ առաջ Ասլանը կարդաց մեզ:

— Հիմա հասկացա՞ք, թէ որտեղից Կարապետ հայր սուրբին եւ նրա համախոհներին կարող էր յայտնի լինել գաղտնիքը, — հարցրեց Ասլանը, երբ վերջացրեց իր պատմութիւնը:

Ես հալոեցայ ամօթից: Գլխաւորապէս իմ եւ Մարօի յիմարութիւնիցն էր առաջ եկել այդ բոլորը: Իսկապէս մենք էինք մեր անզգուշութեամբ մատնել Ասլանին: Նա նկատեց իմ շփոթութիւնը եւ դառնալով դէպի ինձ՝ ասաց.

— Դու ուրախ կաց, բոլորը կանցնի...

Բայց տիկնոջը աւելի հետաքրքրում էր այն, թէ որտեղի՞ց եւ ի՞նչ եղանակով հասել էին Ասլանին այդ տեղեկութիւնները:

— Ես մի օր առաջ նամակ ստացայ, — ասաց Ասլանը: